

# NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Լ. Մ. Ը. Մ.-Ի

ՄԱՅԻՍ 1957

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր պանդխտութիւնը	ՆՄԲԱԳՐԱԿԱՆ	1
Սկաւտութիւնը	Մ. ԵԱՆԳԵԱՆ	4
Արշակ Մխիթարեանի յիշատակին		12
Հ. Հայաստանի եւ Հ. Մ. Ղ. Մ. ի փոխյարաբերութիւնները	Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	14
Քերուրուոյ	Դոկտ. Օ. ԿԵՐԿԵՐԵԱՆ	20
Սկաւտական շարժում	ՀԱՅ ԱՐԻ	21
Educar en la paz	EDITORIAL	25
La U. G. Armenia realizó su fiesta anual		27
El Sr. G. Mardikian a los Boys Scouts		29
Personalidad de George Mardikian	A. TER-AKOPIAN	31
De nuestros archivos	SPORTMAN	32
Una visita de la U. G. Armenia		33
Las buenas obras se valoran y retribuyen	GARO SHAHINIAN	34
¿Desinterés por el deporte, o por el club?	A. TRITSMANS	36
Se realizó la fiesta de apertura de actividades deportivas		38
La nueva comisión de "Navasart"		38

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԴ

Արդէն յայտնի է մեր յարգոյ բաժանորդներուն, որ դեռ տարի մը առաջ, բուզքի եւ տպագրութեան սզութեան պատճառով, բոլոր հրատարակութիւնները բարձրացուցին իրենց փոխարժէքը: Ուստի մենք եւս ստիպուած ենք, Յունուարէն սկսեալ, համեմատական յաւելումով մը, ամսաթիթթիս տարեկան բաժնեգինը նշանակել 50 փեսո: Արտասահմանի համար 4 տոլար: Արդ, կը խնդրենք մեր յարգոյ բաժանորդներէն, որ դիւրացնեն մեր գանձումները այս վերջին սակով:

"ՆԱԽԱՍԱՐԴ"Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՄԵՐ ՊԱՆԻՍՏՈՒԹԻՒՆԸ

Պանդխտութիւնը մեր կեանքի հիւանդագիրն երեւոյթներէն մէկը եղած է:

Ժամանակ մը ան մտահոգիչ համեմատութիւններու հասաւ եւ արժանաւորապէս մուտք գործեց մեր գրականութեան մէջ: Մեր դրողներէն ոմանք արձակ եւ չափածոյ տիրալի էջեր ստորագրած են պանդուխտներու կեանքէն: Մեր զոյգ «կուռնկները» արդէն դասական երգեր են, որոնք նախնական ուժգնութեամբ կը յուզեն մեզ:

Մեր զարիւզները իրենց կարօտները եւ վիշտերը կը պատմէին Հայոց Աշխարհի նախասիրած բանբերին, կուռնկին, որ ամէն աշնան երամ կազմած կը չուէր մեր երկրէն եւ ամէն գարնան կը վերադառնար մեր աշխարհը՝ խապրիկներ: Բերելով պանդուխտներէն եւ խապրիկներ ու կարօտներ տանելու զարիւզներու հարագատներէն:

Այս զարիւզութիւնը, սակայն, ազգային աղէտի մը չվերածուեցաւ երբեք: Մեր փոքրաթիւ պանդուխտները, իբր հեռաւոր վայրեր, հազիւ կը հասնէին Պոլիս, Պզմիք եւ Թուրքիոյ այլ նահանգները, ուր կը մնային ժամանակ մը, վաստակ կ'ընէին եւ նորէն կը վերադառնային իրենց օճախները: Իսկ Ռուսիոյ մէջ գլխաւորապէս Բագու եւ Թիֆլիս կը հանգիստանային պանդուխտներու միջավայրը, ուր, նոյնպէս, դրամ վաստակելով կը վերադառնային հայրենի տունը՝ գոհունակ որ պետական հարկերը թեթեւցուցած են եւ զոյգ մը լծկան դնած են մայր երկիրը նորէն ար,իւնարերելու համար:

Այս ժամանակաւոր պանդխտութիւնն իսկ մեզ ցաւ եւ վիշտ կը պատճառէր: Սակայն եկան աղէտալի ժամանակներ, երբ մեր դարիպութիւնը եղաւ համազգային եւ տեւական: Այժմ դարիպ ենք աշխարհի չորս ծագերուն, կորսնցուցած ըլլալով մեր բնաշխարհը եւ պապենական բոլոր ժառանգութիւնները:

Փոքրիկ բոյն մը դրինք Արարատի փէշերուն տակ, ասկէ 40 տարիներ առաջ, մեր արիւնսով, քրտինքով եւ վաստակով, եւ այդ իսկ խլուեցաւ մեզմէ, խորթ եւ անբնական եղբայրակցութեամբ Հիւսիսի եւ Հարաւի:

Փաստօրէն դարիպ եւ պանդխտ ենք ազգովին, ու մեր թիւը ոչ թէ տասնեակներու, այլ մէկ միլիոնի կը հասնի: Ու մեզ կը զլացուի վերադառնալ մեր հայրենիք, ինչպէս եւ կը զլացուի մեզ խապրիկներ եւ կարօտներ դրկելու մեր հարազատներուն եւ անոնցմէ լուրեր ստանալու:

Աւելի քան տխուր է մեր պանդխտութիւնը, որովհետեւ ժամանակով անսահման է, տարածութեամբ անչափելի եւ միջավայրերով ձուլիչ եւ կործանարար:

Սակայն բոլորովին յուսահատ չենք, որովհետեւ մեզ հետ բերած ենք մեր լեզուն, մեր սուանդութիւնները, մեր պետական յիշատակները եւ այն մեծ կապիտալը, որ ազգութիւն կը կոչուի: Հարկ եղած պարագային, պատիւ մեզ հիւրընկալող բոլոր ժողովուրդներուն եւ պետութեանց, կը ճանչցուինք իբրեւ ազգ, իբրեւ պետական ժողովուրդ մը, որուն հայրենիքը բռնազրաւուած է ժամանակաւորապէս:

Բնական է, փոխուած են ժամանակները, փոխուած են նաեւ մեր բանբերները, պանդուխտներու կռուիկները, որոնք երբեմն կ'այցելեն այս հեռաւոր գաղութը, արծարծելու համար մեր ազգային գաղափարները, յոյս եւ հաւատք ներշնչելու մեզ, ինչպէս նաեւ ըսելու թէ պանդուխտ բոլոր հայ գաղութները կ'ապրին ազգային նոյն գաղափարներով, նոյն մտահոգութիւններով եւ միեւնոյն ձգտումներն ունին. — ազգը պահել եւ անոր գոյապայքարը շարունակել նոյն վճռականութեամբ:

Մեր երկու անուանի այցելուները, Վրացեան-Մարտիկեան, որոնք եկած էին կրթական պարզ առաքելութեամբ, ամբողջ ամիս մը այս գաղութը պահեցին անբեւեակայելի խանդավառութեան եւ բուռն ոգեւորութեան մէջ: Համազգային տօնախմբութիւն մըն էր ա'յն, ինչ որ տեսանք եւ ապրեցինք:

Համաժողովրդական այս հոգեկան բռնկումը ոչ այլ ինչ է եթէ ոչ վկայութիւնը մեր ազգային գաղափարներու, որոնք յաւէտ թարմ են եւ անմահ:

Այս տօնախմբութիւնը վկայութիւն մըն է նաեւ այն բանի, որ մեր ժողովուրդը ոչ միայն չէ մոռցած իր կարճատեւ պետութեան յիշատակները, այլ զանոնք կը պահէ իր սրտին խորը՝ ա-

նոնցմով կ'ապրի, կը դուրդուրայ անոնց վրայ եւ յարմար առիթներով կը ցուցադրէ աշխարհին հպարտութեամբ:

Մեր ազգը, ամէն տեղ, վատահ ենք, նոյն զգացումն ունի:

Մենք ազատ հայրենիք եւ ինքնուրոյն պետութիւն կ'երազենք, եւ մեր այս երազը կը փայտիայեն ազատասէր բոլոր երկիրները, որոնց մէջ, ազատասէր եւ ժողովրդասէր մեր Արժանթինը, որ առաջին հերթին ճանչցաւ Ազատ ու Անկախ Հայաստանի գոյութիւնը:

Եւ մեծ Արժանթինը նորէն հաստատեց իր որոշումը՝ պետական վայելչութեամբ եւ սիրով ընդունելով մեր անուանի հիւրերը: Այս մեծ հանրապետութեան արժանաւոր նախագահը հաճոյքով լսեց մեր ոսկեղնիկ լեզուն եւ թոյլ տուաւ, որ մեր ազգային դրօշակը, Արժանթինի դրօշակի կողքին, քանի մը օր ծածանի Ազատարար եւ մեծ զինուոր Սան Մարթինի արձանն ի վեր, Գորտոպայի մէջ, մինչեւ որ մեր հիւրերը վերադառնան Պ. Այրէս:

Երբեք պիտի չմոռնանք Արժանթինի այս ասպետական կեցուածքը հանդէպ մեր պետական մարդոց, մեր պետութեան եւ ազգային մեր խորհրդանիշներուն:

Մինչ մենք այսպիսի ուրախութեան եւ հրճուանքի մէջ ենք, իսկ մեր ներքին եւ արտաքին թշնամիները սուղի եւ տազնապի մատնուած են:

ԱՒԱՐԱՅՐԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԸ  
ԴԻԻՑԱԶՆԱՄԱՐՏԸ

Հայ Սկաուտներուն,

Հերոսամարտին ինջոյքը շեփոբուած էր:

Մարտիկները հոգեվառուած գունդագունդ կը դիմէին Աւարայր, վրընջող առիւծաբաշ երիվարներու վրայ աշտանակուած:

Զրադաշտի աստուածը ճակատած էր հայուն քրիստոնեայ Աստուծոյն դէմ:

Կռուի շեփոբը հնչեց:

Արեաց գունդը պատնիշացած վարդանի շուրջ, դրո՛ւ տուաւ բիւրերու բանակին դէմ...

Ցեղին դիւցազնական ոգին խոյացաւ դէպի զոհարեթեան բարձունքը: Հայրենիքի սիրով բոցաված պողպատէ կուրծքերու բախումը թնդացուց Շաւարշանի երկնակամարը... եւ Վարդանի Աստուածը հպարտացաւ իր փառքին համար շատրուանած արիւնէն:

Ցեղին վէս ճակատը չը խոնարհեցաւ ստրկութեան բազինին առջև... մահը թառեցաւ արճամարհանքով փակուած անոր կողմերուն վրայ միայն հոն մեռնելու համար:

Աւարայրի ծաղիկները, բոսորազոյն տառերով արձանադրեցին, ինկած քաջերուն կրակները, աւանդելու համար զանոնք ապառաջ Հայրերիներու...:

Եւ այսօր դարերէ վերջ, այդ աւանդին սրտաուռէ ստանձնումը կը տօնէ Հայ Ազգը...

Փա՛ռք ցեղին անշէջ ոգիին:

1920 Փետր. 16

«Հայ Սկաուտ»

### Ս Կ Ա Ո Ւ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ԳԻՏԵԼԻՔ 7.— Կարգալ քարտէս մը պայմանագրակամ նշաններով միա-  
սին, եւ գծել գոհացուցիչ քարտէս մը տեղաւոյն վրայ, նշանակելով ընդուն-  
ուած նշանները աչքառու շէնքերու, քամքանքերու, երկաթուղիներու եւն.:

Առձեռն քարտէս մը գծելու պարագային, յատկութիւնը կարեւոր տեղ  
մը կը գրաւէ, եւ ինչ որ անոր իմաստը չի փոխեր, պէտք չէ աւելցնել վրան:

Գրեթէ ամէն անհատ իր առունձնայատուկ եղանակն ունի քարտէսի մը  
վրայ ցոյց տալու զանազան բաներ, ինչպէս տուն, ճամբայ, ծառ եւն. որոշ  
նշաններ կը գործածուին զծաղրութեանց վրայ ատենք յատկանշող եւ որոնք  
կը կոչուին պայմանագրական նշաններ:

Ուրուագծի մէջ միշտ պէտք է աստիճանաշարը դնել. օրինակ վեց մաս-  
նաշար մէկ մղոնի փոխարէն:

Միշտ լուսանցք մը թողելու է ուրուագծին բոլորտիքը:

Առձեռն նախագծի մը վրայ պէտք է անպայման հիւսիսը բնորոշող կէտը  
ցոյց տալ, հակառակ պարագային՝ նախագիծը իր արժէքը կը կորսնցնէ,  
էրբ անօգուտ:

ՃԱՄԲԱՆԻՔ.— Նախագծի մը մէջ ճամբան կը յատկանշուի զուգահեռ  
շարունակական գծերով, որոնք ցոյց կուտան թէ ճամբան ցանկապատով,  
փոսով կամ ուրիշ արգելքով չըջապատուած է, իսկ եթէ ճամբան բաց է եւ  
շկայ չըջապատող ունէ արգելք, այն ատեն գծերու փոխարէն պէտք է դնել  
ղուզինթաց կէտեր:

Բոլոր ճամբաներու եւ երկաթուղիներու ձախ կողմը պէտք է նշանակուին  
թէ՛ ո՛րիչ կը յառաջանան, եւ ուրուագծին լուսանցքին մօտերը ա՛յ կողմը թէ՛  
դէպի ո՛ր կը շարունակուին: Մօտաւոր քաղաքին կամ գիւղին հետաւորու-  
թիւնը պէտք է նշանակուի, օրինակ.— «Կարսէն երկու մղոն» (ասիկա պիտի  
դրուի ուրուագծին ձախ կողմը): «Իէպի Երզնկա մէկ մղոն», (ասիկա պիտի  
գրուի լուսանցքին աջակողմը):

ԵՐԿԱԹՈՒՂԱԳԻՄ.— Ասիկա ցոյց կը տրուի զուգրնթաց գծերով, որոնք  
խաչաձեւուած են մէջքէն. «միակ» կամ զոյգ բառերը պէտք է գրուին երկա-  
թուղագծին երկայնքին, ցոյց տալու համար թէ մէկ կամ կրկնակ գծեր են  
անոնք:

ՆՆՏԱՌՆԵՐ.— Նշանակէ անոնց բնոյթը թէ մայրի, կաղնի եւն. ծառեր  
եւ թէ անցանելի են կամ ոչ:

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ.— Բերքերուն տեսակը պէտք է ցոյց տրուի, օրինակ՝ ցոր-  
են, գարի, արօտավայր եւն.:

ԿԱՄՈՒՐՋ.— Միշտ կը նշանակէ թէ անոնք ինչ նիւթէ շինուած են, փայտ,  
քար թէ աղիւս:

ԳԵՏԵՐ.— Անոնց ընթացքի երկայնութեանը պէտք է անունը նշանակել եւ  
նետով մը պէտք է ցոյց տրուի անոր վաղելու ուղղութիւնը:

Քաղաքներու, գիւղերու եւ գետերու անունները պէտք են գլխազիր գրե-  
րով գրուին:

Բոլոր գրուածները հորիզոնական պէտք է գրուին, բացի գետերու, եր-  
կաթուղագծի եւ ջրանքներու անուններէն, որոնք կը գրուին անոնց երկայնքն  
ի վեր:

Գետերը պէտք է ընթանելի ըլլան եւ գծուած նիւթին հետ չչփոթուին:  
Եկեղեցւոյ շէնքերը կարեւոր տեղ մը կը գրաւեն զծաղրութեան մէջ, այն

պատճառու որ (1) Եկեղեցի մը միշտ աչքառու պատկեր մը կը ներկայացնէ քաղաքի մը կամ գիւղի մը տեսքին մէջ, եւ երբ քարտէսի մը վրայ եկեղեցւոյ մը դիրքը կը տեսնուի դիւրաւ կարելի է բնորոշել շրջակայ դիրքերը:

(2) Եկեղեցի մը երեք տարբեր ձևերով ցոյց տրուելուն պատճառը այն է որ՝ անիկա յարմար կայան մըն է, ուրկէ, կարելի է նշանախօսութիւն եւ կամ ծառայել իբր գիտարան: Աշտարակով եկեղեցի մը այն նպատակին կրնայ ծառայել, իսկ սրածայր դանդակատուն մը՝ ո՛չ:

ՔՄՍՏԷՍ ԿԱՒԴԱԼԱ — Ամենէն առաջ պէտք է քարտէսին վրայի աստիճանաշարը ուսումնասիրել եւ զաղափար մը կազմել թէ՛ մէկ կէտէն թիւնչու մի ս կէտը ինչ Հեռաւորութիւն կայ: Յետոյ ուսումնասիրել շրջագիծերը, եւ տեսնել թէ՛ դետիւր պատկի՞ր, գառիվա՞ր, ծփծփուն թէ՛ Հարթ է:

Ամենասովորական աստիճանաշարը, Անգլիոյ մէջ, մէկ ինչէղը մէկ մզոնի տեղ, եւ կամ վեց ինչէղը մէկ մզոնի փոխարէն կը գործածուի:

(Մակարդակային) Հարթաչափական գծեր. (Գոնքոսըս) Հարթաչափական գիծը երեւակայիկան գիծ մըն է, որ ցոյց կուտայ Հողի մը ցած կամ բարձր մակարդակները, որոնք ծովու մակերեսէն բարձր կամ ցած աստիճաններ ունին:

Լաւ ըմբռնելու համար թէ՛ (մակարդակային Հարթաչափական) գիծերը ինչ են, երեւակայեցէք ինքզինքնիդ օդապարիկի մէջ, ուրկէ վար կը դիտէք ըլլակի մը վրայ, որ ամբողջովին ծածկուած է ջուրով: Յանկարծ ջուրը 25 սոք կը քաշուի, յետոյ 25 սոք եւս, կրկին 25, բնական է թէ՛ ջուրին այսպէս շարունակական քաշելովը, ամէն անգամ անոր կազմած շրջագիծը՝ ըլլակին կողերուն վրայ երթալով պիտի լայնանայ: Արդ եթէ այդ շրջագիծերը թուշ թի վրայ փոխադրելով գծենք, մենք պիտի ունենանք 25-ական սոքեր, Հարթաչափական գծեր:

Հարթաչափական գծերը ցոյց կուտան նաև գետնի մը սեպածեւ ըլլալու աստիճանը: Որքան մօտիկ ըլլան այդ գիծերը քարտէսին վրայ, գետինք ա՛յնքան սեպածեւ եւ համ դառնթափ կ'ըլլան:

Վարտէս գծերու արուեստը ինքնին գիտութիւն մըն է եւ որքան ալ բացարձակ հոս գիտելիք եօթի քննութեան համար, անկատար պիտի ըլլայ: Սկսուտները անպայման օժանդակութիւնը պէտք է խնդրեն վարժ երկրաչափի մը, որ մանրամասն բացատրութիւններով գիրենք ընդունակ պիտի դարձնէ այս օգտակար գիտելիքին:

Սկսուտական կեանքի ու գործունէութեան ընթացքին, քարտէս մը գծելու եւ կարգալու պէտքը յաճախ գգալի կը դառնայ: Այնպէս որ առաջին կարգի սկսուտի մը համար բացառիկ կարեւորութիւն ունի գիտնալ պարզ քարտէս մը՝ գծել տեղւոյն վրայ, գիտնալ նաև այն պայմանադրական նշանները, որոնք կը գործածուին սովորաբար այդպիսի քարտէսներու մէջ:

Նախընտրելի է որ՝ սկսուտները իրենց գծելիք քարտէսները ստճմանափակին փոքր Հողամասերու վրայ եւ չփորձեն մի՛ծ տարածութիւն ունեցող երկրամասի մը քարտէսը հանել: Լաւագոյն է սկսուտին գիտցած սեւէ մէկ փոքր գետնին քարտէսը գծել՝ քան թէ՛ առաջին կարգի մէջ գտնուած գիտելիք յորսի մէջ յիշուած եօթը մզոն տարածութեան երկայնքին գտնուող երկրամասին աւրուագիծը փորձել, որ սկսուտին կարողութեան վեր է:

Սկսուտներէն ոմանց գուցէ դժուար երեւի գիտելիք եօթի քննութիւնը եւ զիրենք խրաչեցնէ: Բայց այսքանը կրնամ ըսել թէ՛ նախապէս խնդիրներ, որոնց սկսուտը ի բոլոր սրտէ կը փարի, կարծուածին չափ անյողթելի եւ երեւցածին չափ տաղտկելի չեն: Իսկ երբ սկսուտին օգնութեան կը հասնի

կարող երկրաչափ մը, քարտէս դծելու եւ կարդալու արուեստը կը դառնայ հեշտ եւ նոյն ատեն չափազանց հետաքրքրական :

Ոչինչ կայ որ սկաուտին կա՛թէն կրնայ վրիպել : Իսկ այս գիտելիքի, դժուարութեանց յաղթելը առնուազն չափազանց աննշան խնդիր մըն է սկաուտին անյաղթ կամքին համար :

ԳԻՏՆԻԻԻ 8.— Ներկայացնել ձեռակամ աշխատութեամբ շինուած կարասի մը կամ մետաղեայ առարկայ մը եւ կամ կարել սկաուտի ամբողջ համագրեստ մը (չապիկ եւ տաքատ) :

Առաջին կարգի գիտելիք ութը երկար բացատրութեան եւ լուսարանութեան չի կարօտիր : Տրուած պայմանը չափազանց պարզ եւ հասկնալի է : Գլխաւոր կէտը՝ զոր սկաուտնիւր պէտք է ըմբռնեն, այն է թէ՛ ինչ կարասի կամ առարկայ որ ներկայացուի, պէտք է անպայման սկաուտին անձնական ձեռագործը ըլլայ եւ օտար ոեւէ անձ մասնակցած չըլլայ անոր աշխատանքին թէեւ սկաուտը կատարելապէս ապստ է խորհուրդ ստանալ եւ հրահանգներու անասլ :

Քննութեան համար ներկայացուած ձեռագործները, անտարակոյս անընշան խաղալիքներ պիտի ըլլան, այլ պէտք է արժէք մը ներկայացնեն : Երբ կարգ մը սկաուտներ իրը ձեռագործ մէջտեղ պիտի բերեն լաւ կարուած համազգեստ մը, անիրաւ պիտի ըլլար ուրիշ սկաուտներէ ընդունիլ չնչին աշխատութեամբ շինուած անարժէք առարկաներ :

Այն սկաուտները որոնք թանկագին փորձառութեամբ լրացուցած են նորընծայի եւ երկրորդ կարգի ամբողջ շրջանը եւ թեւակոխած առաջին կարգի թիւ ութը գիտելիքին, շատ բնական է ենթադրել թէ՛ այդ երկար ժամանակամիջոցին՝ հետեւած են նաեւ ոեւէ արհեստագիտական ճիւղի եւ ընդունակ դարձած՝ որոշ չափով մը, այնպէս որ երբ իրենք դէձ յանդիման կուսան գիտելիք ութի, ատիկա գիրենք չի խրատչեցնեն, ընդհակառակը պատրաստուած անցեալի փորձառութեամբ, կարասի մը կամ առարկայ մը սիրայօժար կը ձեռնարկեն եւ կը ներկայացնեն քննիչին :

Բոլոր այն անձերը, որ չըլած են Եւրոպա, մերթ ընդ մերթ կազմակերպուած սկաուտական ցուցահանդէսներու մէջ, պարզապէս հիասքանչ մնացած են դեռատի պատանիներու ձեռակամ հրաշակերտները տեսնելով :

Ցուցահանդէսի մը մէջ տեղ գրաւելու համար ոեւէ առարկայ պէտք է լուրջ դործ մը եղած ըլլայ . ապա թէ ոչ, մերժուելու դատապարտուած է : Արդ՝ երբ օտար երկինքի տակ ապրող սկաուտները կարող են զմայլելի առարկաներ շինել, անտարակոյս ոեւէ հայ սկաուտ պիտի չինէր յայտնելու թէ ինք կարող եղած է գէթ կարասի մը շինելու :

Ճշարիտ է թէ՛ կարգ մը վայրերու մէջ, արհեստագիտական ճիւղի մը հետեւելու միջոցներ կը պակսին . բայց նոյնիսկ այդպիսի կեդրոններու մէջ, անկասկած կան որոշ բաներ, որոնց սկաուտները կրնան հետեւիլ եւ վարժ դառնալով արտադրել լաւ ձեռագործ մը :

Պէտք չէ նմանապէս մոռնալ թէ՛ ոչ մէկ պայմանի տակ կարելի է բացառութիւնը յարգել : Ամէն մէկ գիտելիքի համար, սկաուտները պարտաւոր են քննութիւն անցնել առանց մեղմացուցիչ պարագաներ թուելու : Սկաուտական աստիճանի ստացումը կը նշանակէ կատարեալ հմտութիւն ու գիտակցութիւն նոյն աստիճանի համար պարտադրուած գիտելիքներու : Այդ գիտելիքներէն ոեւէ մէկին թերի աւանդումը՝ կը նշանակէ նուազ ձեռներեցութիւն, ինչ որ թոյլատրելի չէ :

Հետեւապէս, ամէն սկաուտ պարտաւոր է լի ու լի համակերպիլ գիտելիք

ութի պայմաններուն եւ լրացնել իր քննութիւնը այնպէս ինչպէս կը պահանջուի :

Ձեռական այն արտադրութիւնները որ սկսուածները կը ներկայացնեն յիշեալ քննութեան համար, եթէ պահուին սկսուածներու կեդրոնատեղիին մէջ, շատ ընտիր հաւաքածոյ մը կարելի է ունենալ :

Ասկէ զատ, անոնց ցուցադրումը հանրութեան չափազանց օգտակար եւ արդիւնաւոր կ'ըլլայ :

Լաւագոյն է՝ շինուած իւրաքանչիւր առարկայի վրայ՝ արտադրող սկսուածին անունը դնել :

ԳԻՏԵԼԻՔ 9.— Գնահատել՝25 առ հարիւր սխալելով, հեռաւորութիւն տարածութիւն, մեծութիւն, քիւ, բարձրութիւն եւ ծանրութիւն :

Սկսուածական կեանքը լեցուն է ալլազան արկածախնդրութեամբ, հմայել է բոլոր կորովի եւ քաջ անձերու, անոր համար որ՝ ան կը պարտաւորուի յաղթահարելու բոլոր այն մեծ կամ փոքր խոչընդոտները, որոնք իր անցած արկածախնդրական ասպարէզին մէջ երեւան կուգան :

Մինչդեռ երկշոտ եւ թուլամորթ մարդիկ պիտի ընկճուէին եւ յուսալքուէին այն խոչընդոտներէն : որոնք սկսուածին ձեռներէց որւովը կը յաղթահարուին :

Սկսուածին համար բարձրագոյն հաճոյք եւ ներքին զոհուածութիւն մըն է՝ իրեն անծանօթ հեռաւորութիւն, բարձրութիւն եւայլն կարենալ գնահատել եւ այդպիսով հասնիլ իր նպատակակէտին եւ կամ ի գլուխ հանել ռեէյ յանձնառութիւն :

Հասկնալի է թէ՛ տղայ մը սկսուած եղած ըլլալուն համար, յանկարծ, մէկ օրէն միւսը, ինքզինք ընդունակ չի կրնար դաւանել պատուական գիտելիքներու, որոնց իւրացումը իր ասպարէզին մէջ, ահագին դեր պիտի խաղայ : Տրամարանական է մտածել թէ՛ հեռաւորութիւն, տարածութիւն, մեծութիւն թիւ, բարձրութիւն, ծանրութիւն եւ կամ ասոնց նման գիտելիքներու, ըսկուած մը տեղեակ կ'ըլլայ լուրջ աշխատանքով եւ փորձառութեամբ, այնպէս որ երբ առաջին կարգի աստիճանին մէջ կը դասուի, այդ իսկ ապացոյց մըն է թէ՛ կարեւոր պահանջը մըն է եւ սկսուած պարտաւոր է իւրացնել զայն :

Երբ սկսուած՝ լերան մը կամ դաշտի մը եւ կամ տարբեր որեւէ տեղէ ստիպուած է գնահատել առարկայի մը հեռաւորութիւնը, բարձրութիւնը, ետայլն, անկարող չէ այդ գնահատումը կատարելապէս ճշգրիտ ընել, այլ արդիւնքներ կ'ունենայ, որ մօտաւորապէս ճշգրիտ են : Իսկ սկսուածին համար արդէն դահացուցիչ է՝ եթէ կարողանայ մօտաւոր թիւերը գտնել : Ահա այս է պատճառը որ գիտելիք իննի մէջ թոյլտուութիւն կ'ըլլայ 25 առ հարիւր սխալմունք մը ընել կատարուած գնահատումներու մէջ :

Հեռաւորութեանց եւ բարձրութեանց չափերու գնահատումը պարտաւորիչ հանգամանք ունի սկսուածներու համար. քանիչ ան իր ամէն մէկ քայլափոխին կը հանդիպի բարձրութեան մը կամ հեռաւորութեան մը, որոնց արմէնքներու գնահատումը հարկադրիչ է իրեն համար :

Ուսուցիչի մը հեռաւորութիւնը գատելը շատ մը փորձերէ յետոյ կը սորվուի. ուստի ստորեւ նշանակուած կարեւոր կէտերը պէտք է շատ ուշադրութեամբ ուսումնասիրուին :

Սուրկաներու հեռաւորութիւնը սովորաբար բարձր կը գնահատուին՝

1.— Մուկի եկած կամ պտուկած միջոցին :

2.— Երբ առարկան եւ ետեւի տեսարանը նոյն դոյնը կը կրեն :

3.— Երբ հովիտի մը, կամ վէտվէտուն արօտավայրի մը վրայէն կը դիտուի:

4.— Պողոտաներու, երկայն փողոցներու կամ ձորերու մէջ:

5.— Երբ առարկան շուքի տակ է:

6.— Ընդհատուած գետնի վրայ:

7.— Մշուշի կամ ազօտ լոյսի մէջ եւ կամ երբ ջերմութիւնը գետնին վրայէն կը ցոլանայ:

8.— Երբ առարկան մասամբ տեսանելի է:

Առարկաներու հեռաւորութիւնը սովորաբար վար կը գնահատուին՝

1.— Երբ արեւը դիտողին ետեւի կողմը կը գտնուի:

2.— Յստակ օդի մէջ, օրինակ ծանր տեղացող տեղատարափէ մը յետոյ պայծառ արեւոտ օր մը:

3.— Երբ առարկան եւ ետեւի տեսարանի գոյները իրարու հակոտնեայ են:

4.— Երբ գետինը տափարակ է, կամ երբ ձիւնով ծածկուած է:

5.— Երբ ջուրի վրայ է կամ խոր անդունդէ վար կը նայուի:

6.— Երբ դէպի վեր կամ վար կը նայուի:

7.— Երբ առարկան իր շուրջ գտնուող նիւթերէն բաղդատարար աւելի խոր է, ինչպէս մեկուսացած արձան մը կամ եկեղեցի մը:

Մեծ հեռաւորութիւններ դատել դժուար է, ասոր համար անհրաժեշտ է աստիճանաբար սկսիլ եւ փոքր հեռաւորութենէ յառաջացնել աւելի մեծերը:

Ատիկա կատարելագործելու համար սկառուտները պէտք է գիտնան նախ իրենց ասիին մեծութիւնը, երկու ձեռքերու ուղիղ տարածուած վիճակի մէջ ամբողջ երկայնութիւնը, ոտքին խոշորութիւնը եւ քայլաշափին միջոցը եւ վազելու ժամանակամիջոցը:

Եթէ անոնց չափերը եւ թիւերը միտք պահելու ըլլան, շատ օգտակար կրնան ըլլալ արշաւներու միջոցին:

Լաւ է նմանապէս, սկառուտական ցուպի վրայ գծերով նշանակել մեզրի աստիճանները:

Երբ մարդ իր սովորական քալուածքին չափը գիտէ, ան դիւրաւ կրնայ հասկնալ թէ քանի՞ մղոն տեղ կտրած է որոշ ժամանակի մէջ: Նկատենք թէ մէկը կրնայ չորս մղոն ճամբան մէկ ժամուան մէջ կտրել, արդ եթէ ան մէկուկէս ժամ ճամբայ քսլէ, ըսել՝ է թէ վեց մղոն տեղ քալած է:

Հեռաւորութիւնը կրնայ ձայնի լսողութեամբ ալ գնահատուիլ, օրինակ. եթէ թնդանօթ մը պայթի հեռուն եւհամրէք երկվայրկեանները բոցը տեսնելէն մինչեւ պայթումին ձայնին հասնիլը եւ բաղձապատկէք ատիկա 365-ով, պիտի ունենայ առարկային հեռաւորութիւնը եարտայի հաշիւով:

Չայնը մէկ երկվայրկեանի մէջ 365 եարտա արագութեամբ կը սուրայ:

Ամենէն օգտակար եղանակը հեռաւորութիւն չափելու՝ տեսողութեամբ է, թէեւ ատիկա քիչ մը փորձառութեան կը կարօտի, այսուհանդերձ սկառուտներու համար դժուար չէ, երբ կամք կը դրուի զայն իւրացնելու:

Ամենէն առաջ սկսելու է փորձի հարիւր եարտա հեռաւորութեան վրայ, Դիտեցէ՛ք առարկան զանազան երեւոյթներու ներքեւ, այսինքն՝ արեւը կը փայլի դիտողին ետեւէն, երբ առարկային ետեւը կը մնայ, երբ ոեւէ մէկ կողմը կ'իյնայ եւ երբ երկինք անձրեւոտ կամ ամպոտած է: Նոյնպէս շարունակելու է քննութիւնը զանազան հոգիերու փչած միջոցին:

Հիւսիսային հովը աւելի մօտիկ ցոյց կուտայ, մինչգետ արեւելեան հոսով նոյն առարկան աւելի հեռուն կ'երեւի:

Գերմանական բանակին մէջ, հեռաւորութիւններ գնահատելու համար, հետեւեալ հրահանգներով կը մարզեն զինուորները:

Յիսուսն եարտա հեռաւորութենէ մարդու մը բերանն ու աչքերը յստակօրէն կը տեսնուին :

Հարիւր եարտայէ աչքերը իբր կէտեր կը նշմարուին :

Երկու Հարիւր եարտայէ կոճակները եւ փայլուն մասերը կը տեսնուին :

Երեք Հարիւր եարտայէ դէմքը կարելի է տեսնել :

Չորս Հարիւր եարտայէ սրունքներու շարժումը կը դիտուի :

Հինգ Հարիւր եարտայէ համազգեստին դոյնը կրնայ գանազանուիլ, թէև կարծիք դոյնը աւելի հեռուէն կը նշմարուի :

Գիշեր ժամանակ պտարկաները սովորաբար աւելի մօտ կ'երևին քան լոյս ատեն :

Մեծ հեռաւորութիւն ունեցող առարկաներու միջոցը զնահատելու համար՝

1.— Ձեր եւ առարկային միջև գտնուող հեռաւորութիւնը աչքի չափով կրնուի, կէտ մը որոշեցէք, յետոյ՝ այդ կրճատուած հեռաւորութիւնը հարեարկան եարտայի վրայ հաշուելով արդիւնքը կրկնապատկեցէք :

2.— Հաշուեցէք առարկայի մը ամենահեռու դիրքը, նոյնպէս եւ անոր ամենամօտ դիրքը. երկու հեռաւորութեանց միջև պիտի ըլլայ մօտաւոր չափը :

3.— Ձեռքերնիդ երկարեցէք, այնպէս որ՝ բթամատը ծածկէ առարկան եւ ձախ աչքը դոցած՝ դիտեցէք, յետոյ՝ բթամատը առանց շարժելու նոյն վիճակի մէջ դիտեցէք, այս անգամ ալ աչքը դոցելով : Կարծէք թէ բթմամատը դէպի աջ քալած է. բթամատին երկու տարբեր դիրքերուն երեւցող միջոցը հաշուեցէք եւ բազմապատկեցէք իննով : Արդիւնքը մօտաւոր հեռաւորութիւնը պիտի ըլլայ :

Սկաւառ մը պարտաւոր է բարձրութիւններ չափել գիտնալ : Այս վարձութիւնը այն աստիճան պէտք է զարգացնէ որ՝ կարող ըլլայ քանի մը մատնաչափէ մինչև երկու երեք հաղար ոտքի բարձրութիւններ կուսնել : Երբ սկաւառը փոքրիկ փորձեր կը կատարէ, օրինակ. ցանկապատեր, խրամատներ, տուներ, ծառեր, բլրակներ եւայլն չափէ, հետզհետէ փորձառու կը դառնայ բարձրութիւն ունեցող առարկայի մասին դիւրաւ զողարկար մը կազմելու : Աչքի վարձութիւնը մեծագոյն դասատուն է սկաւառին բարձրութիւններ գտնելու արուեստին մէջ. իսկ եթէ ճիշտ թափուի նոյն բանը մեղանով եւ գրիչով բացատրելու, բաւական դժուար եւ անօգուտ աշխատանք մը պիտի ըլլայ :

Ծառի մը բարձրութիւնը չափելու համար սկաւառական դաւազանը ուղղահանգիստ արեւուն մէջ բռնեցէք, նշանակեցէք անոր ձգած շուքին ծայրը եւ զուղույթները չափեցէք ամրող շուքին երկայնութիւնը :

Արդ, նկատենք որ սկաւառական դաւազանը ճիշտ հինգ ոտք երկայնութիւն ունի, իսկ անոր թողած շուքը տասը ոտք, ուրեմն. մենք կ'օճենանք հետեւեալ արդիւնքը.  $5/10 = 1/2$  :

Այսինքն, շուքը այդ պահուն իրականին մէջ կրկնապատիկ մեծ ցոյց կու տայ առարկան, քանզի դաւազանին երկայնութիւնը մեղի ծանօթ ըլլալով, եւ շուքն ալ չափելով, մենք կը տեսնենք թէ՝ օրուան այդ պահուն, անիկա երկու անգամ խոշոր հետք կը թողու :

Շարունակելով մեր փորձը, երբ ծանօթանանք շուքի համեմատական մեծութեան հետ, չափեցէք ծառի մը շուքը :

Ենթադրենք թէ՝ ատիկա քառասուն ոտք երկայնութիւն ցոյց տուաւ, այդ դաւազանի համեմատական չափը կիրարկելով, մենք կ'օճենանք քառասուն ոտքին կէսը, որ հաւասար է քսան ոտքի :

Ընդհանրացնելու համար այս եղանակը, կարելի է ծառի մը բարձրութիւնը դանդելու ձեւը սահմանել սապէս դաւազանի մը բարձրութիւնը նոյն

Համեմատութիւնը ունի իր շուքին հետ, ինչ Համեմատութիւն որ ունի ծառի մը բարձրութիւնը՝ իր շուքին հետ:

Տարբեր եղանակ մըն է՝ քալել ծառէն, ութը կարտա հեռու եւ հոն տրնկել զաւազան մը՝ վեց ոտք երկարութեամբ: Յետոյ շարունակեցէք քալել՝ մինչեւ որ հասնիք այնպիսի կէտ մը՝ ուրկէ դետնէն նայելով գաւազանին դադար ուղիղ գիծ մը կազմէ ծառին դազաթին հետ:

Այն ատեն ծառին (Ա) յատակէն մինչեւ գաւազանին Գ. կէտը, այնպէս կը Համեմատի Ա-Բ-ի (այսինքն ծառին բարձրութեան), ինչ որ է Բ-Գ հեռաւորութիւնը գաւազանի բարձրութեան:

Այնպէս, եթէ Ա-Գ հեռաւորութիւնը 33 ոտք է, եւ Բ-Գ հեռաւորութիւնը ինը, (գաւազանի բարձրութիւնը վեց ոտք հաշուելով), ծառին բարձրութիւնը 22 ոտք կ'ըլլայ:

Սկսուածները յաճախ կը պարտաւորուին առուններ եւ գետեր անցնելու, բայց այդ առուններուն եւ գետերուն լայնութիւնը նախապէս գիտնալ անբաժնետեսութիւն մը կը դառնայ շատ մը պատճառներով:

Եւ որովհետեւ սկսուածական խմբակներ, իրենց կազմածներուն հետ, չեն կրնար չափադիտական գործիքներ պտտցնել, ուստի տարբեր միջոցներով կը ստիպուին չափել ոեւէ գետ, ձոր, եւայլն:

Եթէ շատ ստիպողական պէտք մը կայ, կարելի է պարզ ակնարկով մը գետին լայնութեան մօտաւոր չափը կռահել՝ ոտքի կամ մեղքի հաշուով. իսկ եթէ ժամանակ կարելի է վատնել, այն ատեն Հետեւեալ եղանակը կրնայ գործածուիլ գետի մը լայնութիւնը դտնելու համար:

Գետին միւս եզրերին վրայ ընտրեցէք ծառ մը, կամ ոեւէ առարկայ մը, եւ ուրիշ մը նոյն ուղղութեան վրայ քու կանգնած եզրերիդ վրան: Նոյն կէտէն զուգահեռաբար յառաջացէք, զոր օր. հարիւր եարտա, հող նշան մը տնկեցէք եւ շարունակեցէք քալածնուդ կէտը, այսինքն յիսուն եարտա, ատկէ ուղիղ անկիւնով մը դարձէք, համրելով քայլերնիդ, մինչեւ որ ձեր դրած նշանին՝ դիմացի եզրերի ծառին կամ առարկային հետ մէկ գծի վրայ երեւին:

Այն հեռաւորութիւնը, զոր քալեցիք ուղիղ անկիւն կազմած տեղէն, կ'ըլլայ գետին լայնութեան կէտը: Օրինակ. եթէ դարձած կէտէն 90 եարտա տեղ քալեցիք, ըսել է թէ գետին լայնութեան կէտը 90 եարտա է, կամ թէ ամբողջ լայնութիւնը՝ 180 եարտա:

Տարբեր եղանակ մը.— գետին հակառակ եզրերին վրայ առարկայ մը նշանակեցէք եւ սկսեցէք քալել եզրերի վրայ, ենթադրեցէք՝ քսան եարտա, հող ձող մը դրէք. յետոյ նոյնքան քայլ կրկին քալեցէք (այս անգամ քսան եարտա): Ատիկա ուղղանկիւն ձեռով դէպի ներքնամաս յառաջացէք, մինչեւ որ ձողը եւ հակառակ եզրերին վրայ նշանակուած առարկան մէկ գծի վրայ գան: Ատկից մինչեւ եզրերին հեռաւորութիւնը հաւասար է գետին լայնքին:

ԳԻՏԵԼԻՔ 10.— Նորընծայի պահանջներու համաձայն դաստիարակելու հարգի պատանի մը:

Առաջին կարգի աստիճանը կը լրանայ գիտելիք տասի գործադրութեամբ: Սկսուած որ անխոնջ աշխատութեամբ, օրինակելի նկարագրով եւ յարտեւութեամբ հետեւած էր սկսուածական ամբողջ շրջանին, նորընծային մինչեւ առաջին կարգի աստիճանը եւ քալ ու հմուտ դարձած էր բազմաթիւ դիտելիքներու եւ մասնագիտութեանց, պարտաւոր է ջրոյց տալու իր ձեռներէջ ընդունակութիւնը: Զորօրինակ օգնութեան ձեռք կարկառելու է իրեն նմանը

եղող ուրիշ պատանիի մը, որ սկառուական շարքերէ Հեռու մնացած ըլլալով, չունի այն ընտիր յատկութիւններն ու առաւելութիւնները, զոր կը կրէ ճշմարիտ սկառու մը, եւ ակնապիշ ու թախանձադին կը սպասէ որ մէկը օգնէ եւ քաշէ դինքը դէպի սկառուտներու տաքուկ ընկերակցութիւնը:

Ահա այսպիսի պատուական առիթներու օգտագործման համար է որ դիտելիք տասի միջոցաւ պարտաւորութիւն դրուած է առաջին կարգի սկառուտներու վրայ: Բայց, այս պատանին արձանագրելու համար չէ, պահանջին նպատակը մի միայն, այլ՝ նորագիրը նորընծայի բոլոր պահանջներու համաձայն, դաստիարակելու համար:

Այնպէս որ ռաջին կարգի սկառուը կարողանայ իր լիակատար քննութիւնը տալ:

Ոչ մէկ սկառու պէտք չէ առարկութիւն բերէ դիտելիք տասի դէմ, յայտնելով թէ նորագիր սկառու կարելի չէ գտնել: Այս պատճառաբանութիւնը բացարձակապէս անընդունելի է եւ սկառուը պարտաւոր է անպայման համակերպիլ դժուած կանոնին: Հարիւրաւոր ընտիր եւ մաքուր նկարագրով պատանին կան դպրոցներու կամ շուկայի մէջ, որոնք սիրալոյսով պիտի անդամագրուին, եթէ իրենց խրախուսանքին ամակցութիւն տրուի: Եւ երբ սկառու մը կը կարողանայ մինչեւ առաջին կարգի աստիճանը հասնիլ, աստիճակ հրաշալի անպարոյշ մըն է թէ ան ճարտար է քեանքերիւ եւ իրեն ընկեր դարձնելու անվարժ եւ սկառուական հաճոյալի կեանքէ անտղեակ տղաքը:

Գիտելիք տասը պահանջք մըն է որ սկառուին շատ մը յատկութիւնները փորձաքարի կը զարնէ: Եթէ յաջողի ան կը դառնայ իսկական եւ հասուն սկառու: Եւ իտեպլ սկառուը այն է՝ որ կը դառնայ առաջին կարգի սկառու:

Ինչպէս կը տեսնուի Երկրորդ կարգի Գիտ. 8ը եւ Առաջին կարգի Գիտ. 2ը յար եւ նման են եւ մէկուն համար տրուած սկզբունքները կը պատշաճին միւսին, որով նոյնը կրկնելու հարկ չկայ: Մէկ որոշ կէտ կայ, զոր պէտք է քաջ բմբունեն սկառուտները, այն է խնայասիրութիւնը: Խնայասիրութիւնը պէտք է ըլլայ առաջնորդող գաղափարը ո՛չ միայն դրամական գործերու մէջ, այլ նաեւ ուել նիւթի շուրջ, ուր վատնում կամ մսխում կայ: Օրինակ՝ սկառու մը խնայասիրութեան նոյնքան պատուական դաս առած կ'ըլլայ ճաշի միջոցին տեսելով իրեն համար բուլարար պտուղ, հաց եւ կերակուր՝ առանց աւելցուքի եւ փշրանքներու, որքան երբ նոյն սկառուը 5-10 դահեկանը կը պահէ փոխանակ անուշիղէնի կամ սինեմայի համար ծախսելու: Գաղափարը նոյնն է եւ գովելի, քանզի ասոնց մէջ իսկ կը տեսնուի խնայասիրութեան ոգիին պահպանումը. այնպէս որ երբ սկառուտներէն կը պահանջուի երկու հարիւր դահեկանի գումար մը չահիլ եւ նոյնը խնայել: Միեւնոյն ատեն կը յուսացուի թէ իւրաքանչիւր տղայ խնայասիրութեան իսկական եւ լայն ոգին պահպանելու պիտի ջանայ իր ամէնօրեայ կեանքին մէջ:

Նիւ Եորք

ՄԿՐՏԻՉ ԵԱՆԸԳՆԱՆ

ԱՐՇԱԿ ՄԻԻԹԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Հ.Մ.Ը.Մ.ը կորսնցուց իր գործօն ու եռանդուն անդամներէն մէկը, յանձինս Արշակ Միիթարեանի:

Ծնած էր Սալնոյ Զորի (Պիթլիս) շրջանի Բրիտանացի գիւղը, 1903-ին: Աղբիւր Սերոբի հայրենակից ըլլալով, շատ կը սիրէր դայն եւ անոր առասպելային բոլոր քաջագործութիւնները կը պատմէր երկիւղածութեամբ եւ հպարտանքով:

Ամէն հայու պէս, աջտորի եւ գաղթականութեան բաժակը ցմբուր քամելէ վերջ, կը հաստատուի Պ. Այրէս, ուր սկիզբը իր բեւ գործաւոր կ'աշխատի ուրիշի քով եւ ա-

պա քանի մը տարի վերջ կը բանայ իր անձնական խանութը՝ օթոյի երկկտրականութեան եւ «կօմա»յի վերաբերեալ գործերու: Իր հեղ եւ մեղմ բնաւորութեամբ շուտով կը սիրուի «Կուտ-Երը»ի պէս աշխարհահայտնայի առեւտրական հաստատութիւններէն, որոնք ամէն դիւրութիւն կուտան, որպէսզի յառաջանայ իր գործին մէջ: Արշակ, յամառ եւ չարքաշ աշխատող, ի դերքեւ չի հաներ իր վրայ դրուած յոյսը եւ վստահութիւնը, եւ քիչ ժամանակուան մէջ, նախանձելի դիրքի մը կը հասնի: Տարի մը առաջ Հիւս. Ամերիկա կ'երթայ վեց ամսուան պտոյտի, այցելելով՝ իր աղգականներուն, հայրենակիցներուն, նոյնպէս աղգային հաստատութիւններու եւ թերթերու խմբագրութեանց: Ան տեղւոյս Սալնոյ Զորի Հայր. Միութեան հիմնադրներէն էր եւ ատենապետը միանգամայն:

Ըստ սովորութեան, այս տարի եւս, օգափոխութեան կ'երթայ իր տիկնոջ հետ, Մար Տէլ Փլաթա: Տղաքը տունը կը մնան գործով: Գիշերուան ընթրիքէն վերջ, դուրս կ'ելլէ շրջան մը ընելու: Հազիւ յիտուն քայլ առած, անծանօթ մը, ատրճանակը ձեռքին, կը սպառնայ որ գտակը տայ: Արշակ, այս անակնկալին բոլորովին անպատրաստ, կ'ըսէ որ քովը դրամ չունի, ոճրագործը երեք անգամ կը կրակէ, բայց փամփուռները կրակ չեն առներ: Արշակ հալիւ շարժում մը կ'ընէ, բայց արդէն չորրորդ գնդակը կը վերաւորէ գինքը: Ոճրագործը կարծելով որ մեռած է, կ'անհետանայ մթութեան մէջ:

Քանի մը վայրկեան վերջ, նոյն տեղէն անցնող բժիշկ մը գինքը անմիջապէս հիւանդանոց կը փոխադրէ իր ինքնաշարժով: Արշակ բաւական արիւն կորսնցուցած էր, բայց դեռ կենդանի, անմիջապէս օթեւանէն իր կինը կանչել կուտայ եւ գինքը կը փոխադրեն բուժարան, ուր չորս բժիշկներու ներկայութեամբ արեան ներարկման եւ սպա գործողութեան կ'ենթարկուի, բայց բոլոր փորձերը անօգուտ կ'ըլլան նորէն կեանքի բերելու գինքը, եւ կ'աւանդէ հոգին, հինգ ժամ վերջ, չփոթումի եւ յուսահատութեան մասնելով իր տիկնոջ, ուր տառապանքով ներկայ կ'ըլլայ խեղճ ամուսնոյն քանի մը ժամուան կեանքի ու մահուան յուսահատական կուռին: Մարմինը կը փոխադրուի Պ. Այրէս, Ռամոս Մեխիայի իր բնակարանը:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Մարտ 26ին: Հակառակ գործի օր ըլլալուն, ներկայ էին մեծ թիւով յուզարկաւորներ, որոնք եկած էին իրենց

վերջին յարգանքը մատուցանելու մեր ազնիւ Արշակին: Կրօնական արարողութիւնը կատարեցին Յ. Մ. Վրդ. Մուշեան եւ Տ Շաւարշ քհնյ Մեհրապեան եւ մարմինը գետեղուեցաւ Սան Խուսթոյի դերեզմանատան մէջ: Ծագկեպսակներ բերած էին ընտանիքը, սարազանները, ազգային հաստատութիւններ, առեւտրական տուններ եւ Հ Մ Ը Մ ի «Պօչա» ի բ ընկերները:

Իր հեղ եւ ուրախ բնաւորութեամբ սիրուած էր ամենէն անխտիր: Ազնիւ, ներողամիտ, անկեղծ, դժասիրտ եւ նիւթապէս ու բարեյապէս զոհուող մարդ էր: Նա համակ սիրտ էր եւ հոգի:

Շատ կը հետաքրքրուէր մեր ազգային, եկեղեցական եւ կրթական կեանքով եւ գործնականապէս մասնակից անոնց: Հայրենիքի կարօտը կ'այրէր զինքը:

Յուանդուն էր եւ կայտառ: «Պօչա» խաղալու ժամանակ՝ կատակասէր, ուրախ եւ կենսուռնակ էր: Դաշտին համն ու հոտն էր, միշտ երբ մը չըթուէքին: Իր պակասը շատ զգալի պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին մէջ, մանաւանդ «Պօչա» ի բ ընկերներուն, որոնք իր մահով կը կորսնցնեն անդերազանցելի խաղընկեր մը եւ եղբայր մը միտնդամայն: Իր մահուան յաջորդ կիրակին Հ.Մ.Ը.Մ.ի «Պօչա» ի դաշտին մէջ խաղերը դադրեցան, ի յարգանս իր յիշատակին:

«Պօչա» ի բ ընկերները իր քառասունքին առթիւ պոռնոզէ յուշատախտակ մը զետեղեցին դաշտին մէջ, իր յիշատակը թարմ պահելու համար:

Արշակ Զա'ն, քեզ միշտ պիտի յիշենք:

“ՊՕՉԱ”ՅԻ ԸՆԿԵՐՆԵՐԻ

Ամուսնայս եւ հօր Արշակ Մխիթարեանի մահուան տխուր առթիւ, կը յայտնեմք մեր խորին շնորհակալութիւնները, հայ եւ օտար իր բոլոր բարեկամներուն, ընկերներուն եւ հայրենակիցներուն, որոնք անձամբ, ծաղկեպսակներով, նուիրատուութեամբ, ճամպով եւ հեռագրով սգակից եղան մեզ:

Այրի Տիկ. ՄեհիթԱՐԵԱՆ ԵՒ ԶԱԻԱԿՈՒՆԿ

Այրի Տիկ. Լուսին Մխիթարեանի զաւակունք, իրենց ամուսնոյն եւ հօր մահուան առթիւ, կ'ընեն հետեւեալ նուիրատուութիւնները--

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ 500, Ազգատախտակին 500, Երկրորդական վարժարանի ֆոնտին 500, Հ.Մ.Ը.Մ.ին 500, Հ.Մ.Ը.Մ.ի “Պօչա” ի մասնաճիւղին 500, Սպիտակ Զորի Հայրկ. Միութեան 500 “Նաւասարդ” ամառաբերքին 200, “Արմենիա” օրաթերքին 200, “Շարժում” շաբաթաթերքին 200 փեսո:

Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՐԻՆԻԻԵՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՓՈՒՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶԻ ՆԱՄԱԿԸ ՊՈԼՍՈՅ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԻՆ

Ալեքսանդրապոլ 10 եւ 20 Մայիս

Միտիլ Տղաք,

Թերեւս դուք կը կարծէք որ Հայաստան մեռաւ, թաղեցինք ու ծանր քար մը գրինք վրան:

Թերեւս կը կարծէք որ Հայաստանին հետ խաչ քաշեցինք նաեւ մեր սըրտին այնքան մօտիկ սկառուտութեան եւ մարմնակրթանքի վրայ:

Բոլորովին կը սախլիք:

Անցեալ տարուան Յուլիս 26-ի յիշատակելի բաժանումին գլխէս անցածները մասամբ գիտէք, մասամբ ոչ: Են այդ մասին պիտի չգրեմ ձեզի, Հարկաւ երջանիկ առիթներ պիտի լինին, որ կարողանամ այդ ամէնքը պատմել ձեզ, բերանացի: Ես ուզեցի սր այս նամակս աւելի մտերմական տեղեկագիր մը ըլլայ մեր այժմու մարմնակրթական շարժումին, քան թէ արկածներու պատմութիւնը:

Մարտ 22-ին, Երեւանէն մեկնեցայ եւ քանի քանի անգամ մահուան հետ մտերմական տեսութիւններ ունենայէ վերջ անկործ հասայ այստեղ:

Ներկայանալով Ամերիկեան Օգնութեան Կոմիտէի լիազօր Գարթ. Պրատունի, իրմէ ստացայ պահակապետի պաշտօնը:

Ամերիկացիք Ալեքսանդրապոլի մէջ երկու հիմնարկութիւններ ունին, Բոլիվոնը՝ ուր կան մանչ որբերը, իսկ Քաղաչի Բօսթի մէջ աղջիկները:

Երբ պաշտօնս ընդունեցի, այդ կը նշանակէր միայն պահակապետութիւն:

Բայց երբ տեսայ պահակները եւ պահականոցը, երեւակայութիւնս նորէն սկսաւ թոխիք առնել:

Տօ', ըսի, սա տղաքը սկառու շինենք:

Պահականոցն ալ յարմար էր, միջավայրը ամփոփ: Եթէ չօգտուէի պատհուութիւններէն՝ Բրօսիի օդն ու ծովը, Տորքեան օրերը. Հ.Մ.Ը.Մ.Ի փառքըն ու պատիւը հարաւ պիտի ըլլային ինձ:

Գացի Մր. Պրատունի քով, Հասկցուցի նպատակս՝ «Ինչ կ'ուզես ըրէ ըսաւ»: Լայն բացաւ պահեստներու դռները: «Ինչ կ'ուզես ըրէ, Հաւնածդ առ» ըսելով: Եւ հիմա Քաղաչի Բօսթի պահակները սկառու-աթլէթներ են եւ պահականոցը՝ իր շրջանակով այնպիսի մարմնակրթական հաստատութիւն մը, որ եզական է Հայաստանի մէջ եւ որուն շատ տեսակէտով կարող է նախանձիլ Պոլիսը: Սկսայ գործի:

Մի գիշեր, այդ գիշերուան յիշատակս ինձ Համար անսպառ արդիւնք է դուարթութեան եւ քիչ մըն ալ պարծանքի. մի գիշեր տղաքը իրենց խմբապետները զրկեցին իր պատգամաւոր, ինձ յայտնելու թէ սկառուական շորեր չեն հագնիր թէ կարճ բանթալօն հագնիրը ամօթ է, եւայլն, եւայլն: Ննջարանին մէջ կը սպասենք պատգամաւորութեան վերադարձին: Պահանջները պէտք է ընդունէի, ապա թէ ոչ...

Ապա թէ ոչ ի՞նչ...: Լիչ:

Պատգամաւորութիւնը նոյնութեամբ վերադարձաւ բերածը ետ տանելով գլխիկը, խրատուած, Համոզուեցան որ իրենց երանելի օրերը անցեր են:

Հիմա բոլորն ալ սկառու են, նորընծայ եւ արժանի եղբայրները պուսեցի կտրիճ հայ սկառուներուն:

Հիմա չես կարող Համոզել, որ կարճ-բանթալօնը, սկառուական հա դուստները հանեն:

Հայհոյանք չես լսեր, խոռվութիւն, էնթրիկ, անկրթութիւն իսպառ կո- բած են:

Ինչպէս ըսի, մեր պետն է Գարթ. Պրաունը, անոր նման ասպետ օտար- ասզդի, գործիչ հապիւ թէ ոտքը դրած լինի Հայաստան: Անիկա այստեղ մեր սկառուներուն մեծ աղբայրն է, սկառուասպետը: Թող լաւ տղաք ըլլան, ամէն ինչ կուտայ:

Հիմնարկութեան արհեստանոցները այս միջոցին մեզ համար կ'աշխա- տին միայն: Փայտի արհեստանոցը նոր շինեց կօյի փայտեր, փառուոր, դեռ կը շինէ դաւազաններ, այսօր պիտի յանձնէ հիբ ճըմբը եւ վաղուրնէ պիտի սկսի հրրուքներ շինելու:

Կաշեգործները զբաղում են մեր դօտիներով, հիւսները պէտք է շուտով սկսին տուչի բաղնիքի պատրաստութեան: Կար ու ձեւի արհեստանոցը կը կարէ սկառուական հադուստներ:

Ձի մոռնամ յայտնելու, ի պէտս հետաքրքրներու, որ իմ համակրելի օգնական է Սկիւտարի Հ.Մ.Ը.Մ.էն Զաքէոս (ձորճ) Մարտիկեանը, շատ լաւ «Եօլա» կ'երթանք:

Զաքէոսը հապիւ հազ Կարսի մէջ կարողացեր էր փրկել մեզ հետ բերուած Հ.Մ.Ը.Մ.ի գոյքերու աննշան մնացորդները, այդ խլեակներն են՝ եօթը ձեռք հադուստ, վեց դօտի, հինգ զլխարկ, մէկ սկառուակ (տիւքօ), մէկ Ֆութ- պոլ, մէկ փոմփ, երկուական արշին կարմիր եւ կապոյտ կտոր, մի քանի «Հայ Սկառու» 54 հատ սկառուական օրինազիրք եւ չորս հատ քօքարտ:

Աթլէթական զոյքերու կողմէն աղքատ ենք: Գունդերը կտորած են, կը գործածենք՝ Ռուսական եկեղեցիին չորս անկիւնները դրուած հին ումբերը, որոնց վրայ ծակ է, խոշոր են եւ Տ քիւ 185 կրած կը կլնեն:

Սկառուականը մէկ հատիկ է եւ իր շրջանակաէն դուրս դալու ցանկութիւնը կը յայտնէ:

Մէկ Ֆութպոլ մը ունինք, մէկ ալ իմա երկու, չորս լասթիկ ունինք, բայց սօլիսիտն չի կայ ոչ ալ կտոր:

Ո՛ւր է «Հայ Սկառու»ը, ինչը կ'ընէք որ մենք չգիտենք, դեռ անցեալ տարուան ողիմպիականին արդիւնքը չեմ գիտեր:

Կոփամարտը մանաւանդ, որ այնքան նոր եւ տարօրինակ երեւոյթ մըն է այստեղ, ահադին հետաքրքրութիւն առաջ կը բերէ: Տղոց մէջ իրական տա- դանդներ կան, այստեղ սքիլ ունեցողներ կան, որ մարդ կը զարմանայ:

Երէկ տեղի ունեցաւ մեր նոր դաշտին վրայ միջ-խմբային Ֆութպոլի լի- կի առաջին պաշտօնական մրցումը, չորս խումբեր կան: Առաջին խումբը չորրորդին յաղթեց 5-1:

Պօքսի, չուանի, դունտի, վազելու եւայլնի մրցումները միշտ միջ-խմբա- յին բնոյթ ունին եւ նիշեր կը դրուին, արդիւնքները կը փակցուին պատե- բուն. պահակային ամենօրեայ հրահանգներուն գիմաց: Պատերը զարդար- ուած են գրքերէս կարուած սկառուական եւ մարմնակրթական խոշոր պատ- կերներով:

Այստեղ պէտք է յայտնեմ, որ սկառուական դրութիւնը քիչ շատ յար- մարցուցած եմ պահակային դրութեան: Օրինակ՝ լիսնապետի դրութիւնը: Մէկ խօքով. մեզ մի մոռնաք, կ'արժէ որ զբաղուիք, որովհետեւ ար- դիւնքները արդէն շօշափելի են եւ դեռ կը լինին: Ամէն ինչ նպաստուոր է, գլուխիս կանգնած է Գար. Պրաունը, որուն համար կ'արժէ որ երիցս կեցցէ տան մեր պոլսեցի սկառուները: (Ձեր նամակը բոլոր ընկերներուն ներկայու-

Թեամբ կարդացուեցաւ եւ ձեր «կեցցէ՛՞ի փափաքը գործադրուեցան Մ. Խ. — «Հայ Սկաուտ»ի): Շինութիւնը նոյնպէս նպաստաւոր է, փառաւոր ննջարան մը ունինք, ուր 120 անկողին կայ: Յութպոլի դաշտին վրայ մտերմ Գլխալ հաւուզ մը պիտի ունենանք:

Յաջողութեան մէկ ուրիշ պատճառն ալ այն է, որ լիազօր եմ, մինակ ես եմ ու իմ խօսքս:

Ժողով մողով հարկաւոր չէ որչում մը գործադրելու համար, ոչ ալ խաչածեւոյ տարրեր կան:

Ուրեմն՝ տղա՛ք, դեռ կ'ապրինք, կը յուսամ թէ՛ երկինքէն լուսանկարչական գործիք մը կը հասնի, որպէսզի մեր գործունէութիւնը պատկերազարդենք: Իսկ առայժմ գոհացէք իմ շփաղանց հապճեպ տեղեկաւորով: Կեանքիս մէջ ոչ մի ժամանակ այսքան գրադուած չեմ եղած, բայց երբեք ալ այսքան անուշ գրադուած չեմ ունեցած:

Գոյքերուս մեծ մասը գտայ, թէև շատ ու շատ բան պակաս է: Մարմնակրթական գրքերս կը մնան ամբողջութեամբ:

Ես առայժմ չեմ խորհիր Պոլիսի մասին, այստեղ Պոլիս է ինձ համար եւ բան մ'ալ աւելի. թէև շատ բան ալ պակաս: Տղոցը բարոյական կերպարանափոխումը կատարեալ է արդէն: Իսկ Ֆիդիբական մարզական կեանքի մէջ հռանդով նետուեցան եւ մարմնական զարգացումին մէկ ամսուան մէջ արդէն նախանձելի լինելու աստիճան զարգացաւ: Բնածին ձիրքերով օժտուած տղաքներ շատ կան, որոնք մարմնակրթական աշխարհին մէջ աստղեր կարող



ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ

Հ. Մ. Ը. Մ.ի Հերոսներէն

են լինել: Բարձրութիւն ցատկելու առաջին փորձին տասնըհինգ ամեայ կար-  
նէցի Սարգիս Յովհաննէսեանը 1 մ. 25 ցատկեց անթերի սթիլով, անցեալ օր  
1 մ. 30-ը անցաւ: Ուրիշ 3-4 տղաք կան որոնք մօտէն կը հետապնդեն զինքը:  
Ժամանակս չի ներքը, մանրամասնութեան մէջ մտնելու, բայց շատ ու  
շատ դո՛ւ եմ: Սա ինձ համար հրազ մըն էր, որ իրականութիւն կը դառնայ,  
ունենայ հարիւր տղայ մարդէլ իբր սկսուող եւ իբր մարդ, լինել քաջախիտութեամբ  
ու լիագոր, միջոցներն ու միջավայր ունենալ, արդիւնքներ քաղել: Բոլորը  
իրականացած, շնորհիւ մեր անդուզական դարթ. Պրատնին:

Տղոցը պրամագրութիւնը շատ քարձք է, որ կ'ապրին կոր մաքուր, բաւ  
դաստիարակութիւն եւ շարքաչ կեանք, ուսում, աշխատութիւն եւ զբօսանք,  
ամէն ինչ ունին:

Փոքրիկ Պոլսի մը մանրանկարը. Հ.Մ.Ը.Մ. ունինք, որտեղի պաշտելի  
դէմքերը բակայն յուսանկարներու հաւաքածոյիս մի քանի թանկագին խըլ-  
եակներուն վրայ կ'երեւին:

Տղէրք, մի պատգամաւոր, քննիչ տեղեկարար դրկեցէք մեզ մօտ, ոյ  
տեսնայ ու դատնայ: Ես իմ մասին շատ դրել չեմ ուղեր: Ես դժուարահաս  
ամէն բանի մէջ, բայց եթէ ես դո՛ւ եմ, ա'լ հասկցէք:

Ի՞նչ անակնկալ կը լինէր, եթէ Կարօն յանկարծ դար:

Տղա'ք, մեզի երգարան պէտք է, իմի՛ններս «անաֆօն» ըրեր են: Տղոցը  
երգ պէտք է սորվեցնել, եղանակներ շատ գիտեմ բայց բառեր չեյ:

Զեր գործունէութենէն բոլորովին անտեղեկ եմք, ինչ որ անցաւ դար-  
ձաւ Հ.Մ.Ը.Մ. ի կեանքին մէջ, մեկնելէս է վեր, չեմ գիտեր եւ «Հայ Սկա-  
ուսաններուն անհամբեր կը սպասենք»:

Ձերդ  
ՎԱՀԱՆ ԶԵՐԱԳ

Յ. Գ. Գարթ. Պրատնի հետ նոր տեսակցեցայ, պիտի սկսուտացնենք  
Բոլիւոնի տղաքներէն ութը հարիւր հօգի: Ինձ առաջարկեցին երթալ այն-  
տեղ: Մերթեցի: Այսու հանդերձ ընդունեցի այնտեղի ալ Ընդհ. Սկսուտա-  
պետ լինելը: Մեր երկու Փութպոլէն մէկն ալ զրկեցինք այնտեղ: Կ'ըմբռնէք  
որ դորսն ծանր է: Կը թելադրեմ որ Մր. Եարօն տեսնէք եւ առաջարկէք մար-  
դիներ ուղարկել, եթէ այդպէս «էնայի»ներ դտնուին, մարդիչ ըսելով հոս-  
հոսներ սալոնիներ եւ արդիւթներ ըսել չեմ ուզեր: Հպստտ, ոչ ցուցամուլ,  
գործի տղաքներ: Ես լաւ եմ եւ լաւատես, նոյնը կը մաղթեմ ձեզ: Մեզ մի  
մտնաք, եւ ձեր անուշիկ հոգածութեան առարկաներ ըրէք մեզ:

Տղոցը ողջոյնը ձեր ամէնուր, իսկ իմ համբոյրները: Երկար նամակներ  
կ'ուզեմ: Համբոյրներ ձերմէնհանին, Վարազին, Եղուարդին, Տիգրոյին, Օն-  
նիկին եւայլն եւայլն:

Նարէն Ձերդ  
Նոյն

ՄԱՆՕԹ. — Մկաւուտ խմբապետ եւ մարդիչ մեր անմահ Վահան Զերազի  
Հայաստանէն (Ալեքսանդրապոլը), (Լենինական) ուղարկուած մէկ տեղեկա-  
պիւր Կ. Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ. ի կեդրոնին տալով՝ մեր նպատակը եղաւ ծածօթա-  
ցընել մեր նոր սերունդին, այս մեծ հայրենասէր Հ.Մ.Ը.Մ. ականին Հայաս-  
տանի մէջ իր ըրած գործունէութեան եւ կազմակերպչական տարած աշխա-  
տանքներուն մասամբ մը քայլ տալու համար, թէ այս հերոս Հ.Մ.Ը.Մ. ականը  
եւ անոր հիմնադիրը, իրիչ մեծ գոհուցութիւններ յանձն առաւ, մէկ կողմ  
ձգելով Պոլսոյ բարեկեցիկ եւ խաղաղ կեանքը, մնաք բարով ըսելով ծնոցալ եւ

ընտանիքին, Հայաստան գնաց ու գործեց, նախնական միջոցներ ունեցող երկրի մը մէջ մարդեց, կրթեց եւ կազմակերպեց Հազարաւոր որբեր, ինչպէս կը սիրէր ըսել. «Անդոյն, անանուն, բայց ինձ համար պաշտելի», դժուարին անտեսական եւ քաղաքական պայմաններու տակ աշխատեցաւ մեր անհետ կորսուելու դասապարտուած նոր սերունդը փրկելու, կարգապահ, Ֆիզիքսպէս առողջ եւ ազնիւ, Հայաստանի քաղաքացիներ պատրաստելու համար: Ու դեռ աւելին. երբ Հայաստանի քաղաքական հորիզոնը մթադնեցաւ քաղաքական վերիվայրումներու պատճառաւ, երբ իր մարդիչ ընկերներէն շատերը ստիպուեցան արտասահման մեկնիլ, Չերազ մնաց. սա յատկանշական խօսքը ըսելով. «Ինձ համար միայն Հայաստանը կարեւորութիւն ունի եւ ոչ թէ բէժիմը»:

Կարսի անկումէն յետոյ, ուր կը հրատարակէին նաեւ «Հայ Արի» ժառանգական եւ սկառուտական թերթ մը, շատ մը տառապանքներ քաշելէ յետոյ, կուգայ եւ Ալեքսանդրապոլի Հազարաւոր որբերու սկառուտական եւ մարդական հողը իր վրան կ'առնէ ձեռնհասութեամբ ու զոհը կ'երթայ տխրահուշակ եւ Հայաստան Բերիայի անարդար մէկ որոշումով. 1928-ի Յունուարին Թիֆլիզի մէջ կը գնթակահարուի այս ազնիւ եւ վսեյ Հ.Մ.Ը.Մ.ականը եւ մեծ հայրենասէրը:

Ներկայ Հայաստանի շատ մը նշանաւոր դէմքերը անցեալին, Վ. Չերազի որբ սկառուտներէն եղած են, որոնցմէ կ'արժէ յիշել Գ. Մահարին, որ դեռ պատանի որբ, սկառուտներու շարքին մէջ երեւան ելած է իր գրական տաղանդը: Եւ սկսած է իր աւաջին գրական փորձերը:

Գ. Մահարի հետեւեալ ոտանաւորը գրած է Չերազի - Ալեքսանդրապոլի կազալի Բաստ Սկառուտական բանկատեղիէն, նուիրելով Հայ Սկառուտին:

### ՍԿԱՌՈՒՏԻ ԵՐԳԸ

(Հայ Սկառուտ) 1922

Գրեց. Գ. ՄԱՀԱՐԻ

Օրը Մթնում է, թնդում են անձում  
Սրտերը մեր ծիր խնդուքեամբ ջահել,  
Սուտեր է հագել մեր պահակատում,  
Ու մենք չենք կարող մեր ճիշդ պահել:

Անցնում ենք շարքով առաջ ու առաջ,  
Մեր ոտների տակ գետինն է թնդում,  
Մեզ հրդեհել է նոր կեանքի մի կանչ  
Ու մենք հօգոր ենք աշխարհիկ բանտում...

Շարքեր նոյնագօր, Շարքեր բիրաբիր  
Փռուել ենք որպէս վարդավառ մի տօն,  
Կազալի-Բօստից մինչեւ ջինջ վաւիոր,  
Մինչեւ արեւմուտք, հեռաւոր Բաստան...

Անկումներից վեր, վերելից վերելք,  
— Ծկէ՛ք, կանչում ենք ուշացածներին,  
Ծկէ՛ք շարք առ շարք մեր աշխարհով մէկ,  
Հները անցան, նոր քայտ չերբին...

— Եկե՛ք կամչու՛մ եմք, թող մեր կանչը սեզ  
Ձեր հոգիներու՛մ հուրի պէս այրի,  
Մեր յազթանակի՛ն եկե՛ք ու հասե՛ք,  
Եկե՛ք միացե՛ք մեր հոծ Շարքերի...

Երկերը մեր հիմ, մորթուած բիր անգամ,  
Կանչու՛մ է արթուն, կանչու՛մ ու կրկին  
Մեր խումբերն են անցնում յազթական,  
Հիւսում նոր պսակ, նոր կեանքին փառքին:

Ալեքսանդրապոլ (Հայաստան)

Այս առթիւ, աւելորդ չեմ նկատեր Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկառու  
խմբապետներու խնամքին յանձնուած հազարաւոր որբերու դանակը եւ ցու-  
ցակը տալով. քաղելով Ամերիկեան նպաստամատոյցի Կովկասի Ընդհ. Տնօ-  
րէն Գարեթէն Եարոյի անդեկադրէն:

«Երեւանի մէջ ունինք 4000 որբեր, Էջմիածնի մէջ 600-1000. Ալեքսան-  
դրապոլի շրջանակները ունինք որբանոցներու երեք մեծ կեդրոններ, 250 չէն-  
քերով եւ ընդամէնը 2000 որբեր: Չալալ Օղլուի մէջ 4000 որբեր, Ղարաքիլի-  
սայի մէջ 2000, մեր խնամած որբերուն ընդհանուր թիւը կը հասնի 23.000-ի:  
Թիֆլիսի մէջ ալ կը կերակրենք 10.000 հայ կիներ եւ երեխաներ:

«Սկիզբի օրերուն, երբ երեխաները կը հաւաքէինք մեր որբանոցներուն մէջ  
չափազանց մեծ դժուարութեանց կը հանդիպէինք: Երեխաները, գրեթէ ա-  
մէնքն ալ տիրող պայմաններուն հետեւանքով խաթարուած էին: Դժուար բան  
մըն էր, գողութեան եւ ստախոսութեան վարժուած երեխաներու նկարագրերը  
չինել:

»Այս տեսակէտով, Պոյ-սկառուտիզմը նախախնամական դեր մը կատարեց:  
Մեր որբանոցներուն մէջ ունեցանք Պոլսէն եկած երեք Հ.Մ.Ը.Մ.ական մար-  
պիչ երիտասարդներ՝ Պ. Պ. Չերազ, Եաղմաճեան եւ Գալուշի, որոնց կը պար-  
տինք մեր երեխաներուն այսօր դէպի լաւ ենթարկուած փոփոխութիւնը»  
Առանձնապէս շեշտելով կ'ըսեմ.

— Մենք պէտք ունինք ուրիշ մարդիչներու ալ թող դան եւ ծառայեն  
իրենց փոքրիկ եղբայրներուն: Չեմ կրնար երեւակայել ուրիշ աւելի մեծ հայ-  
րենասիրական ծառայութիւն մը, քան այն, որուն համար կոչու՛մ կ'ընեմ հայ  
երիտասարդներուն»:

Կարծեմ խորհրդածութիւն ընելը աւելորդ է, այսքանը անդամ կը փառ-  
տէ եւ ցոյց կուտայ, որ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութիւնը հիմը դնելով Հայ-  
յաստանի սկառուտիզմի, ինչ մեծ ծառայութիւն մատուց Հայ Ազգին:

Պուէնոս Այրէս

ԿԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ

Ք Ե Ր ՈՒ Ե Ը Տ ՈՒ Բ

Քերուըտուըը Հիւանդութիւն մըն է, զերելու անդիմադրելի եւ անհան-  
դուրեւելի պէտքն ու փափաքը: Կարծես մարմնին մէջ մըջիւն մը կը շրջի:

Քննենք, բժորոշենք կատաճառները, դատաւորենք զանոնք եւ դարմանենք:

Պատճառները բազմապիսի եւ բազմաթիւ են: Քերելու ախտը՝ Հիւթա-  
կան կամ արիւնանկան խանգարում մըն է: որ կ'ընայ ունենալ զանազան պատ-  
ճառներ. Հա՛ զլիւսուորները. — Ա) Ալիտակրական (Բ՛) Սննդական Գ) Դեղորայ-  
ջային:

Ա. — Ախտակրական ինքնաթունաւորման խանգարումներ խիստ յաճախա-  
դէպ են, ինչպէս՝ շաքարախտային, յօղացաւային, երիկամային, դաշտա-  
նային, լեարդային, մաղձային, ստամոքսային, դալկութիւն, պնդերակու-  
թիւն, ծնրութիւն, պնդութիւն, արեան զերճնշում, անմարտողութիւն,  
եւլն., եւլն.:

Վերոյիշեալ ախտածին վիճակները լեարդի-երիկամի անբաւարար գոր-  
ծուեցութեան հետեւանջով կրնան պատճառել զերուըտուընքը:

Բ. — Սննդական պատճառները նաեւ նուազ յաճախադէպ չեն: Գիտենք  
որքան անձեր զերուըտուըրի, եղձնօքի ենթակայ՝ են որոշ սննդեղէններու  
պատճառով: Յիշենք ի մէջ այլոց՝ ինքեպատեան, խեցեմորթ, ապուխտ, եր-  
շիկ, հակիթ, շոքուա, աղածամիս, որսացեալ երէ՛, ձուկի տեսակներ, պա-  
հածոներ, համեմանք, ընդեղէն — ոսպ, չնփաղանց իւղոտ եւ մսոտ, աղի, կը-  
ծու ուտելիքներ, խմորուած (Ֆերմանթէ՛) պանիը, ելակի տեսակներ եւլն.,  
եւլն.:

Լեարդի-երիկամի մարտդական դրութեան որոշ անբաւարար գործու-  
եցութիւն մը կրնան անհանդուրեւելիութիւն եւ զերուըտուը պատճառել: Ա-  
սոնց կարգին պարտինք նաեւ յիշել եւ նկատի ունենալ ալլերթիի եւ անաֆի-  
լաքիի նոր տեսութիւնները:

Գ. — Դեղորայքային պատճառներ. սուրճ, թէյ, այլբուլ, ծխախոտ, գոգա-  
յին, պիլատոն, անթիբիոն, գինին, սնդիկ, պրոմիւր, գլորալ, աֆիոն եւ  
բազադրութիւնները, բալասանային դեղեր, եւլն., եւլն., գրգռիչներ:

Ասոնց չափազանց եւ երբեմն մինչեւ իսկ պարզ սովորական գործածու-  
թիւնը, տարիներու ընթացքին, յամբարար եւ աստիճանաբար, երբեմն ան-  
ձերու մօտ, կը ստեղծեն լեարդի-երիկամի գործուակերպին մէջ անբաւարա-  
րութիւն մը, որ պատճառ կ'ըլլայ անուանելի զերուըտուըրի:

Ասոնց շարքին յիշենք նաեւ լեարդի, մաղձապարկի, խանգրէասի շրջանի  
եւ լեարդի մանրորդային բարդութիւնները, որոնք կը պատճառեն նաեւ զեր-  
ուըտուընքը:

Պարտինք նկատի ունենալ եւ յիշել կարգ մը ախտարանական երեւոյթներ  
զանազան պատճառներով, մորթային (էքզէմա) թէ նեխական անհանդուրեւ-  
թիւններ, որոնց կ'ընկերանան զերուըտուընքը: Օրինակ՝ մակարճածային  
զերուըտուընքի՝ զոս, ոլլախտ, ջլախտաւոր վիճակ (նեւրոբաթիք), հոգեկան  
լլախտաւորներ, չափազային բացառիկ անկման վիճակ, որ կ'առթէ՛ ցնցում,  
խանգարում եւ տակնուվրայութիւն, ներքին խոր գրգռում աղիքային որդե-  
բու կամ մակարոյծներու շարժումով:

Ասոնք բոլորը՝ կրնան ստեղծել կազմային բարդութիւններ, ջղային տակ-  
նուվրայութիւններ, խանգարել երիկամային-լեարդային բարուք եւ կանո-  
նաւոր գործելակերպը, խաթարել արեան եւ մէղի քննութեան արդիւնքները եւ



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՍՎԱՌՏ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Հ.Մ.Բ.Մ.ի Ծնողական Խորհուրդի անդամներէն Տիգ. Սիրանոյշ Թազէոսեան, ինչպէս անցեալ տարիներուն, նոյնպէս ալ Մարտ 30ի Եարաթ գիշերը՝ ընդունելութեան ճաշատեղան մը տուաւ ի պատիւ Սկառուսական Խորհուրդի վարիչ-անդամներուն:

Հաճելի էր երեկոյթը, մասնաւորաբար անոր համար որ, առանց սակարկութեան, սկառուսական խորհուրդի եռանդուն մեր տղաքը, կրցան արժեքներ իրենց շահած համբաւը, նախ, բանակումի գործը կազմակերպելու եւ յետոյ, ՉՉ օր շարունակ պաշտօնի վրայ գտնուելու, անտես առնելով նոյնիսկ անձնական գործի ընթացիկ պահանջները, օրապահիկ թէ շահ:

